Հայաստանի Հանրապետության «Երևանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա–ի անվ. հ. 168 հիմն.դպրոց ՊՈԱԿ –ի ուսումնական հաստատության տնօրենի կողմից

Հաստատված է

Դպրոցի տնօրեն՝ Գոհար Մելիք–Ստեփանյան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ Հ.168 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա ՄՈՎՍԻՍՅԱՆ

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ




*ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳԱԽՈՍՆ Է.*

*«Հայրենիք ստեղծելը հերոսություն է,*

*հայրենիք շենացնելը՝ առաքինություն»*

*Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս*

Ուսումնական հաստատությունում կրթության և դաստիարակության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կազմվել է տարեկան համալիր աշխատանքային պլան:

Աշխատանքային գործունեության թիրախ խմբերը հետևյալն են՝

- ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
- ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
- ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԵՏ
- ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ
- ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ
- ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարված ժամկետը |
|---|---|---|
| | Դասղեկի ժամերին անցկացնել զրույցներ մարշալ Բաղրամյանի, ծովակալ Իսակովի և այլ ռազմական գործիչների, հայկական բանակի, Արցախյան հերոսամարտի մասին: | Սեպտեմբեր |
| | Կազմակերպել հանդիպումներ Վ. Սարգսյանի և Մ. Մելքոնյանի անվան ռազմական կրթօջախներում սովորող  հ 168 դպրոցի նախկին սաների հետ | Տարվա ընթացքում |
| | Աջակցել զինղեկին 8-րդ և 9-րդ դասարանների տղաներին դաստիարակելու որպես ապագա զինվորներ՝ հայրենիքի պաշտպաններ: | Տարվա ընթացքում |
| | Հետևել, որ դասղեկները առանձնահատուկ ուշադրություն դարձնեն ռազմահայրենասիրական դաստիարակությանը: | Տարվա ընթացքում |
| | 8-րդ և 9-րդ դասարաններում անցկացնել «ՀՀ պաշտպանությունը պետության և ժողովրդի հիմնական ֆունկցիաներից մեկն է» թեմայով: | Տարվա ընթացքում |
| | Անցկացնել զինավարժություններ դպրոցական մրցույթ և կինոդիտումներ ու քննարկումներ՝ նվիրված ՀՀ անկախության 31 ամյակին | Տարվա ընթացքում |
| | Կազմակերպել հանդիպումներ հ 168 դպրոցին կցված զորամասի զինվորների և սպայական կազմի հետ: | Տարվա ընթացքում |
| | Կազմակերպել զրույց զորացրվող զինվորների հետ « ինչպես է անցնում ծառայությունը զորամասում» թեմայով: | Տարվա ընթացքում |
| | « Փառքի սրահի» նյութերի համալրում | Տարվա ընթացքում |

| | | |
|---|---|---|
| | Կազմակերպել այցելություն Սյունիքի մարզ | Մայիս |
| | Աջակցել զինղեկին կազմակերպելու տարիանման ուսունավարժանք | Տարվա ընթացքում |
| | Երգի ուսուցչուհուն հանձնարարել աշակերտներին սովորեցնել ռազմահայրենասիրական երգեր: | Տարվա ընթացքում |
| | | |

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

| | | |
|---|---|---|
| | Կազմակերպել միջոցառում նվիրված անկախության օրվան  7,8,9-րդ դասարանի աշակերտների հետ | Սեպտեմբեր |
| | Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում 9-րդ դասարանցիների հետ | Սեպտեմբեր |
| | Միջոցառում  պատերազմում զոհված հերոսների հիշատակին, 9-րդ դասարանի աշակերտների հետ | Տարվա ընթացքում |
| | Ստեղծել հանձնաժողով / ըստ դասարանների/ վարքի շեղում ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ համապատասխան աշխատանքներ կազմակերպելու համար: | Սեպտեմբեր |
| | Հետևել դպրոցի և նրա շրջակայքի մաքրությանը և տարվա ընթացքում կազմակերպել շաբաթօրյակներ: | Տարվա ընթացքում |
| | Կազմակերպել Ա/Խ-ի հաշվետու ժողով, անցկացնել ընտրությունների 2022-2023 ուստարվա համար նոր խորհուրդ ստեղծելու նպատակով: | Հոկտեմբեր |
| | Ուսուցիչի օրվան նվիրված միջոցառում | Հոկտեմբեր |
| | Վազգեն Ա-ին ծննդյան օրվան նվիրված միջոցառում | Տարվա ընթացքում |
| | Թարմացնել «մեր գերազանցիկները » ստենդը: | Տարվա ընթացքում |
| | Ըստ մ/մ-ի թարմացնել սրահներում տեղադրված ստենդները: | Տարվա ընթացքում |
| | Հաշվառել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, տվյալներ ձեռք բերել նրանց մասին` հնարավոր օգնություն ցուցաբերելու համար: | Սեպտեմբեր |
| | Ձևավորել նոր ստենդ «մեր առօրյան» | Հոկտեմբեր |
| | Հայտարարել «լավագույն ուսուցիչ»,«լավագույն դասղեկ»,«լավագույն դասվար»,«լավագույն աշակերտ» մրցույթ: | Տարվա ընթացքում |
| | Աշակերտական խորհրդում ձևավորել «հավադարը հավասարին» սկզբունքով աշխատող հանձնախումբ, ՁԻԱՀ-ի և ՄԻԱՎ-ի տարածման դեմ պայքարի սեմինարներին մասնակցած աշակերտներին ներգրավել այս հանձնախմբում: | Տարվա ընթացքում |
| | Մշակել ուսուցչի պահանջով ծնողին դպրոց հրավիրելու բլանկներ և հետևել, որ հրավերքը կազմակերպվի պատշաճ մակարդակով | Սեպտեմբեր |
| | Կազմակերպել հանդիպում «վարքի» խնդիր ունեցող երեխաների ծնողների և դպրոցի տնօրինության հետ: | Տարվա ընթացքում |
| | Կազմակերպել Սպորտլանդիա տարրական և միջին դասարանի աշակերտների միջև | Տարվա ընթացքում |
| | Կազմակերպել այցելություն Ազգային ժողով | Տարվա ընթացքում |
| | Կազմակերպել այցելություն շոկոլադի գործարան | Տարվա ընթացքում |

# ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԵՏ

| | | |
|---|---|---|
| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ |
| | Յուրաքանչյուր դասղեկի հանձնարարել կազմակերպել բաց դասղեկի ժամ: | Տարվա ընթացքում |
| | Օգնել ԴԱՍՂԵԿՆԵՐԻ զուգահեռ դասարաններում կազմելու աշխատանքային պլաններ և քննարկել դրանք ԴԱՍՂԵԿՆԵՐԻ մ/մ նիստում: | Օգոստոս |
| | Օգնել ԴԱՍՂԵԿՆԵՐԻ անցկացնելու սեմինարներ և զրույցներ աշակերտների և նրանց ծնողների հետ | Տարվա ընթացքում |
| | Հետևել, ուղղություն տալ և վերահսկել դասղեկի ժամերին անցկացմանը: | Տարվա ընթացքում |
| | Կազմակերպել դասալուսումներ և բաց դասեր | Տարվա ընթացքում |
| | Անցկացնել զրույցներ բոլոր դասարաններում «Հայ ժողովրդին հարկավոր են խոր գիտելիքներ»թեմայով: | Սեպտեմբեր |
| | Հետևել որ երգի ուսուցչուհին և դասղեկները բոլոր դասարաններում սովորեցնեն հիմնի բառերը, ծանոթացնելն գերբի և դրոշի պատմությանը: | Սեպտեմբեր |
| | Անցկացնել զրույցներ«Ինչու՞ եմ սիրում դպրոցն ու իմ ուսուցչին» թեմայով՝նվիրված ուսուցչի օրվան | Հոկտեմբերին |
| | Անցկացնել դասղեկի ժամեր՝ նվիրված երիտասարդության համաշխարհային օրվան: | Նոյեմբեր |
| | Աջակցել 9-րդ դասարանների դասղեկներին կազմակերպելու ամանորյա պարահանդեսներ: | Դեկտեմբեր |
| | Աջակցել դասղեկներին կազմակերպել միջոցառումներ նվիրված ազգային տոներին : | Տարվա ընթացքում |
| | Հանձնարարվել դասղեկներին տեղեկացնել ծնողներին դասերին անպատրաստ և առանց գրենական պիտույքների ներկայացող, դասապրոցեսը խանգարող, դասերից սիստեմատիկաբար ուշացող աշակերտների համար կազմված հատուկ գրաֆիկի մասին, որը հնարավորություն է տալիս ամենօրյա ստուգումների արդյունքում կարգի հրավիրել վերը նշված աշակերտներին: | Տարվա ընթացքում |
| | Դասղեկի ժամերին անցկացնել փոքրիկ ինֆորմացիոն զրույցներ քաղաքական իրավիճակի մասին: | Տարվա ընթացքում |
| | Հանձնարարել դասղեկներին 1-9-րդ դասարաններում հաշվառել «Փարոս» ծրագրում ընդգրկված ընտանիքների երեխաներին, հիմք ընդունելով համապատասխան փաստաթուղթը: | Օգոստոս |
| | Օգնել դասղեկներին պատմության և հասարակագիտության ուսուցիչների հետ | Տարվա ընթացքում |

| | | |
|---|---|---|
| | համատեղ, դասղեկի ժամերին անցկացնել զրույցներ հետևյալ թեմաներով.<br>● Իրավունք և օրենք<br>● Իրավախախտումներ և պատիժ<br>● Նարկոտիկների վնասը<br>● Ինչպես պահել հասարակական վայրերում | |
| | Հանձնարարել դասղեկներին աշակերտներին ծանոթացնել «Քաղաքավարության կանոնները» գրքին: | Տարվա ընթացքում |
| | Հանձնարարել դասղեկներին աշակերտներին ծանոթացնել « Էթիկայի կանոններ » գրքին: | Տարվա ընթացքում |
| | Հանձնարարել դասղեկներին կազմակերպել դասղեկի ժամեր` առաջնորդվելով « Հանդուրժողական ուսուցում» ձեռնարկով: | Տարվա ընթացքում |
| | Հանձնարարել դասղեկներին կազմակերպել դասղեկի ժամեր` առաջնորդվելով «Թրաֆիկինգի» ձեռնարկով: | Տարվա ընթացքում |
| | Նշանակել հանդիպման օրեր դասղեկների հետ.<br>1-4-րդ դաս.<br>5-7-րդ դաս.<br>8-9-րդ դաս. | Տարվա ընթացքում |
| | Հետևել, որ դասղեկներն անցկացնեն միջոցառումների / դասղեկի ժամեր/ շարք` դպրոցական գույքը պահպանելու և վերանորոգելու ուղղությամբ: | Տարվա ընթացքում |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

## ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը |
|---|---|---|
| | Համակարգել մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները` հոգեբան, սոցիալական աշխատող, ներառական կրթություն բազմամասնագիտական թիմ | Օգոստոս, սեպտեմբեր |
| | Հոգեբանի, սոցմանկավարժի, ներառական կրթության բազմամասնագիտական թիմի տարեկան պլանի քննարկում: | Օգոստոս, սեպտեմբեր |
| | Կատարել աշխատանքների վերահսկողություն` վերլուծություն,քննարկում, գնահատում: | Տարվա ընթացքում |
| | Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների | Տարվա ընթացքում |

| | | |
|---|---|---|
| | կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը: | |
| | Մասնագիտական կողմնորոշման դասընթացներ 9-րդ դասարաններում ըստ սահմանված ժամանակացույցի: | Տարվա ընթացքում |
| | Նախապատրաստել ուսուցչի օգնականներին դասղեկի պարտականությունների կատարմանը: | Տարվա ընթացքում |
| | | |

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը |
|---|---|---|
| | Ապահովել հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը: | Տարվա ընթացքում |
| | Կազմակերպել դասղեկ-դասվարներին ԿԳՄՍ նախարարի ուղեցույցի մասին տեղեկացում և պահանջվող աշխատանքային պլանների մշակում | Սեպտեմբեր |
| | Սահմանել  վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ: | Տարվա ընթացքում |
| | Տարեսկզբի ծնողական ժողովների ժամանակ ընտրել դասարանների ծնողական կոմիտեների: | Սեպտեմբեր |
| | Հրավիրել դպրոցի ծնողկոմիտեների ընդհանուր ժողով և ընտրել ծնողական խորհրդ: | Սեպտեմբեր |
| | Ծնողական կոմիտեների հետ քննարկել և համաձայնեցնել աշխատանքային պլանը և համաձայնեցնել աշխատանքային պլանը, բաշխել պարտականությունները<br>• Ծնողական կոմիտեի նախագահ<br>• Ուսումնական մասի և հաճախումների հանձնաժողով<br>• Սանիտարիայի և մաքրության հանձնաժողով<br>• Դժվար դաստիարակվող երեխաների հարցով զբաղվող հանձնաժողով | Սեպտեմբեր |
| | Աջակցել ծնողկոմիտեների աշխատանքներին արտադասարանական միջոցառումների կազմակերպելիս: | Տարվա ընթացքում |
| | Հրավիրել և զրուցել այն աշակերտների և նրանց ծնողների հետ, ովքեր հաճախակի են բացակայում: | Տարվա ընթացքում |
| | Ծնողական խորհուրդների նախագահների աջակցությամբ բացատրական աշխատանք տանել ծնողների շրջանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ | Տարվա ընթացքում |

| | | |
|---|---|---|
| | բարոյահոգեբանական աջակցության ծառայություններ կազմակերպելու գործում | |
| | Ոստիկանության, ինչպես նաև սոցիալական աշխատակիցների ու դժվար դաստիարակվող երեխաների հանձնախմբի անդամների հետ միասին կազմակերպել հանդիպումներ վարքի շեղում ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ | Տարվա ընթացքում |
| | Ստեղծված հանձնախմբի օգնությամբ կազմակերպել հանդիպումներ, զրույցներ դժվար դաստիարակվող և վարքի շեղում ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ՝ ծանոթացնելով նրանց աշակերտի ներքին կարգապահական կանոնների հետ | Տարվա ընթացքում |
| | Անցկացնել սեմինար պարապմունքներ դասարանական ծնողական խորհրդի նախագահների հետ աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ | Մայիս |
| | Դասղեկներին հանձնարարել ծնողների ուժերով և նրանց հետ միասին ծնողական ժողովների համար նախապատրաստել զրույցներ հետևյալ թեմաներով.<br>• Դեռահասի պահվածքը փողոցում և դպրոցում<br>• Սեռական դաստիարակության մեջ ընտանիքի դերը<br>• Ծնող- աշակերտ- ուսուցիչ հարաբերությունը<br>• Ինչպե՞ս երեխաների մոտ վարվեցողություն ձևավորել<br>• Իմ իրավունքներին ու ազատությունը ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են քո իրավունքներն ու ազատությու ը | Տարվա ընթացքում |
| | Ծնողների աջակցությամբ կազմակերպել այցելություններ մայրաքաղաքի մշակութալուսավորչական օջախներ | Տարվա ընթացքում |
| | | |

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը |
| | Ծաղիկների և ծառերի խնամք, աճեցում | Տարվա ընթացքում |
| | Դասարանային գրադարանի ստեղծում և դպրոցական գրադարանի հարստացում | Տարվա ընթացքում |
| | Զրույց - բանավեճ տղաների և աղջիկների դպրոցական համազգեստի վերաբերյալ | Սեպտեմբեր |
| | Մուտքի ամանորյա ձևավորում | Դեկտեմբեր |
| | Մասնակցություն մրցույթների | Տարվա ընթացքում |
| | Նվեր ընտրել ու տանել ու արվեստ | Տարվա ընթացքում |

| | | |
|---|---|---|
| | Զրույց «Ի՞նչ կարող եմ ես անել», «Այլոց աշխատանքներն էլ գեղեցիկ են» թեմաներով | Տարվա ընթացքում |
| | «Փոքրիկ վարպետների աշխատանքները» ցուցահանդես | Մայիս |
| | «Գարունը և աշխատանքը» | Մայիս |
| | «Մասնակցություն շաբաթօրյակին» | Տարվա ընթացքում |
| | Ծառատունկ, յուրաքանչյուր դասարան խնամում է դպրոցի տարածքում տնկված առնվազն մեկ ծառ | Տարվա ընթացքում |
| | Ձեռքի աշխատանքների ցուցահանդես | Մայիս |
| | | |

Որպես տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնող ՝ իմ աշխատանքի ընթացքում օգտվել եմ նորմատիվ իրավական ակտերի այն դրույթներից, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են այդ պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները: